ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համակարգող խորհուրդ ձևավորելու մասին

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. փետրվարի 11-ի թիվ 25-Ն հրամանը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի Սիսիանի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունը /այսուհետ՝ ՍԱՏԳ/ Սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով՝ ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանում Համաձայնագրի կողմերն են Համաձայնագրին միացած սուբյեկտները՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպությունները, ինչպես նաև ֆիզիկական անձինք (միասին նաև՝ Կողմեր) ձևավորում են համակարգող խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ):

Խորհրդի կազմում պարտադիր ընդգրկվում են տարածաշրջանում գործող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշման 1-ին կետով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների մեկական ներկայացուցիչ, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչներ և ֆիզիկական անձինք՝ ոչ ավելի հինգ անդամ: Խորհուրդը գործում է խորհրդի անհատական կազմը ձևավորվելուց հետո 2 տարի ժամկետով: Խորհրդի անհատական նոր կազմով գործունեությունը սկսվում է նախորդ կազմի գործունեության դադարման օրը:

Կողմերն իրենց առաջարկությունները, մինչև 2016թ. մայիսի 16-ը, Խորհրդի անդամության համար կարող են ներկայացնել Սիսիանի ՍԱՏԳ /ք.Սիսիան Ադամյան 11, հեռ.՝ 0283-24985/: Հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են. ա) սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձը, բ) սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի իրականացում: Գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներառված է Տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության Համաձայնագրում, որը տրամադրվում է սոցիալական համագործակցության Համաձայնագրին միացած Կողմերին:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի
Սիսիանի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն